ՄԱՀՎԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆԱՐ-ԴՈՍԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ԸՆԿԱԼՄԱՄԲ

Մահը որպես երևույթ հետաքրքրել է արվեստագետներին, որոնք փորձել են գտնել ու բացահայտել մահվան ու անմահության գաղտնիքը: Ծանոթանալով Նար-Դոսի յուրաքանչյուր երկի հետ, համոզվում ենք, որ նրա կերտած հերոսը այս կամ այն պատճառով գնում է դեպի մահ: Մեծ հոգեբանը, բազմիցս անդրադառնալով մահվան գաղափարին, հիմնավորել է այն. պատճառը հասարակությունն է, այն միջավայրն ու դաստիարակությունը, ուր ապրում է հերոսը և դժվարանում մտնել կյանքի հորձանուտ: Նարդոսյան հերոսների բնորոշմամբ մահը միակ իրականությունն է, իսկ մնացած բոլորը լոկ դատարկություն: Ըստ Տոլստոյի մահվամբ չի ավարտվում կյանքը, այլ սկիզբ է դրվում մի նոր կյանքի: Կյանքը ժամանակավոր է, մահը՝ անխուսափելի, պետք է միայն հաշտվել բնական այդ երևույթի հետ: Սրա հիմքում գուցե ընկած է հեղինակի մահվան նկատմամբ ունեցած երկյուղը, որը սահմռկելի է և դժվար հաղթահարելի: «Յուրաքանչյուր մարդու բնազդների, նրա երկյուղների հիմքում ընկած է մահվան սարսափը, որը և կաթվածահար է անում նրա միտքն ու սիրտը»[1]:

Ի տարբերություն Տոլստոյի, Նար-Դոսի համար մահը ոչ թե բնական երևույթ է (որովհետև նրա ոչ մի հերոս բնական մահով չի վախճանվում), այլ տառապանքից փրկվելու միջոց: Գրողի համար կարևորագույնը մարդ էակի հոգևոր ազատագրումն է: Հոգով ու խղճով ազատ մարդը կատարյալ է, իսկ եթե նկատվում է կաշկանդվածություն, այն վերածվում է բռնության, որից ազատագրվելը տարբեր մարդկանց մոտ տարբեր ձևով է հանդես գալիս: Նար-Դոսի կերտած կերպարների համար ելքը հոռետեսական է, փրկությունը մահն է: «Ինքնամերժման գաղափարը կյանքի նկատմամբ ունեցած սիրո հաղթանակն է»[2]. դա է պատճառը, որ ինքնասպանը անտարբեր է թե բնության, թե շրջապատի նկատմամբ, որի արդյունքում առաջ է գալիս հավերժ հանգստության ձգտումը: «Եթե անձի ու արտաքին աշխարհի կապի, հավասարակշռության պայմանը անհատի հարմարողականությունն է, ապա անձի ներքին էության դինամիկ կայունության աճի հետևանքով առաջա-

[1] Զ. Ֆրոյդ, Հոգեվերլուծության ներածություն, Ե., 2002, էջ 271:
[2] Шопенгауер, Артур, философ песимизма, Учение Гартмана объ освобождении мира чрезъ добровольное самоуничтожение, Одеса, 1897, ст. 265.

նում է արտաքին աշխարհին հարմարվելու որոշակի նշաններ»[3]: Եվ ինքնասպանությունը հանդես է գալիս այդ «հարմարողականությանը չհարմարվելու միջոց»: Պատճառը միայնության զգացումն է, բարոյական վարքի անկումը, կյանքի իմաստի կորստյան զգացումը, միջավայրից օտարվելը, որոնք պայմանավորված են մեծ մասամբ մարդու աշխարհըմբռնմամբ, նրա կենսահայեցողությամբ: Գրողը ստեղծել է անհատի հոգևոր աշխարհի վերարտադրման մի նոր մոդել՝ դաժան աշխարհի հետ մենակ մնացած մարդը, որը շարունակ որոնում է բացատրություն, իր վիճակի պարզաբանում, ճշմարտություն և չգտնելով դրանց պատասխանները հիասթափություն է ապրում, ընկճվում և յուրովի է գտնում այդ ամենից ազատվելու միջոցը:

Մահվան պատճառ կարող է հանդիսանալ նաև հերոսին անհայտ կյանքի նպատակը. «... Ապրեցի ամբողջ 27 տարի առանց իմանալու, թե ինչու, և այժմ գոյությունից նորեն գնում են դեպի անգոյություն՝ զզված և ծանծրացած այն բոլորից, ինչ որ տեսա աշխարհ կոչված այս հսկայական հիմարանոցում»[4],-գրում է Շահյանը և շեշտում, որ «բնությունը ծնում է մարդկանց իրեն նույնպես անհասկանալի նպատակով և նույն նպատակով էլ ստիպում ապրել» (411):

Բնությունը որ խաղ է խաղում մարդկանց հետ, հաստատում է նաև Իսահակյանը: Նա ևս փորձում է հասկանալ բնության ստեղծած առեղծվածը: «Բնությունը եթե մարդու համար մահ է սահմանել, ապա մահվանից առաջ նրան պետք է անգիտակցություն պարգևել, մինչդեռ ... մեռնելիս չարաչար տանջանքով մեռցնում է... Չար, դաժան բնություն», «Անիծում եմ բնությունը, նզովում եմ նրան...»[5]: Հոռետես մարդկանց համար մահն է անվիճելիորեն հանդես գալիս որպես կյանքի իսկական նպատակ, և «չկա մեր գոյության մեջ մի նպատակ, բացի այն ըմբռնումից, որ ավելի լավ կլիներ, եթե ընդհանրապես չլինեինք»: Դա միակ ճշմարտությունն է, որովհետև «մենք չգիտենք ինչու ենք ապրում և ինչ ենք ուզում կյանքից: Չէ՞ որ կյանքը տառապանք է, տանջանք, որից կարելի է եզրակացնել, որ աշխարհը ստեղծել է ոչ թե աստված, ինչպես կարծում են ոմանք, այլ՝ սատանան»[6]: Փաստորեն կյանքը «կատարյալ կոմեդիա է», աչինչ ավելին (415):

Հոռետես անձանց երևակայությունը հասնում է նրան, որ կյանքում չկան հնարավոր, իրական արգումենտներ, որոնք կազմում են «կյանքի ու կամքի»

---

[3] Меграбян А. А., теоретические проблемы психологии, Е., 1967, ст. 51.
[4] Նար-Դոս, հատոր 3-րդ, «Մահը», Ե., 1990, էջ 410. (Այսուհետև էջերը կնշվեն տեքստում):
[5] ԳԱԹ, Իսահակյանի արխիվ, «Աստծո մասին, բնության, չարի և բարիի մասին, աշխարհի մասին, ինք. 22բ.», N 344-2, էջ 1-2:
[6] Быховский, Мыслители прошлого, Щопенгауер, Этика со-страдание, М., 1975, ст. 443.

հակադրությունը: Եվ երբ մարդ գիտակցում է դա, կյանքը նրան թվում է նզովյալ: Չէ՞ որ «Աշխարհն էլ կամքն է», և եթե չկա կամք, չկա և կյանք: Որովհետև «կամքը իր էությամբ միշտ տենչում, հագեցման ձգտում է, բայց երբեք չի հագենում, ուստի բովանդակ կյանքը, մեր ամբողջ գոյությունը ստանում է մի հսկայական, հավիտենական տանջանքի կերպարանք»[7]:

Չնայած Շոպենհաուերի՝ կյանքի նկատմամբ ունեցած այս պեսիմիստական հայացքներին, նա երբեք ինքնասպանությունը ճշմարիտ որոշում չի համարում, այլ՝ «հերթական անհատական մոլորություն», բոլորովին «աննպատակ ու անիմաստ արարք», և որ «ինքնասպանությունը ընդհանուր ոչինչ չունի կյանքի մերժման իրավունքի հետ»[8]: Ըստ նրա ինքնասպանը վերջ է տալիս իր կյանքին այն բանի համար, որ դադարում է ցանկանալ, և «եթե չկա ցանկություն, տենչ, չի կարող լինել և կյանք»[9]:

Այստեղից եզրակացնենք այն, որ Նար-Դոսի հերոսների ինքնասպանությունը կամ մոլորություն է, կամ բնավորության բնորոշ թուլություն, որը հող է պատրաստում վճռական քայլի դիմելու համար: Դրանք հոգեպես թշվառ, անգույն արարածներ են, որոնց անհարիր է արարելու, ինչ-որ բան տալու ունակությունը: Նրանք շարժվող մեռելներ են, որոնք չեն կարող սպառել աստծո կողմից ընծայած այն հոգևոր սնունդը, որով օժտված են: Ինչպես Տերտերյանն է բնորոշում, «նման բնավորության տեր մարդիկ ինքնախորասուզված են և նրանց մեջ ցավագնորեն զարգացած է ինքնասիրությունը, կասկածանքը, անձնական ուժերի վրա անվստահությունը: Սակայն, նրանք ընդունակ են ինքնասպանություն գործելու, որպես վայրէջքի կամ ինքնափրկության ճանապարհ՝ տանջանքից խուսափելու, կյանքի տաղտուկից ազատագրվելու համար»[10]:

Եվ պատահական չէ, որ նրանք հոգեպես նախապատրաստված են իրենց վախճանին: Թերևս դա է պատճառը չհուսահատվելու և նույնիսկ ինքնասպանությունը խիզախություն համարելու, քչերին տրված մի հատկություն, որոնք կարող են կամովի գնալ նրա գիրկը:

-«Արդ՝ ով մահից ոչ թե միայն չի վախենում, այլև ինքն է իրեն մահվան գիրկը նետում,- ամենաքաջը չէ՞ »,- գրում է Շահյանը իր նամակում: Ըստ նրա «Եթե կա մի բան, որ ճշմարիտ է, դա մահն է, որովհետև ճշմարիտն այն է, ինչը որ հավիտենական է, իսկ մահն է միայն, որ հավիտենական է» (415): Այստեղ խոսում է շոպենհաուերական այն միտքը, որ «ներկա աշխարհը

---

[7] Նույն տեղում, էջ 382:
[8] Быховский Б. Э. "Мыслители прошлого. Шопенгауер" , М. 1975, стр. 12.
[9] Быховский Б. Э. "Мыслители прошлого. Шопенгауер" , М. 1975, стр. 13.
[10] Ա. Տերտերյան «Երկեր», Երևան, 1980, էջ 111:

լավագույնը չէ և միայն հավիտենական տանջանք է, ուրեմն պետք է ժխտել այն»[11]: Այդ մարդկանց բնորոշ շերտերից մեկը դառնում է «ամեն ինչ հիվանդագին սրվածությամբ տեսնելու և ընկալելու փաստը, ամեն մի մանրուքի ինքնակեղեք կասկածանքով վերաբերվելու հիվանդությունը», բայց «Նրանք շատ ուժեղ են որպես երազող» և «շուտ տպավորվող են»[12]:

Նրանք երես են դարձրել արտաքին իրականությունից, և ավելի լավ գիտեն ներքին իրականությունը, որովետև խորասուզվելով «իրենք իրենց մեջ»՝ ավելի լավ են ճանաչում թե իրենց, և թե դիմացինին: Դրանով է պայմանավորված նրանց մեկուսացումը, երկար ժամանակ տրամադրելը ինքնաուսումնասիրմանն ու ինքնադատապարտմանը, նաև այն, որ չկարողանալով հաշտվել իրականության հետ, չշարժվելով նրա թելադրանքով խորքանում ու կտրվում են շրջապատից: Օրինակ, Շահյանը խուսափում էր ծանոթների հետ հանդիպելուց, վախենում, որ ի հայտ կգա իր «մտավոր սնանկությունը», այդ իսկ պատճառով խույս էր տալիս ու փախչում: Նա գիտակցում էր իր «ավելորդությունը», և այդ մտորումն է, որ նրան մղում է մահվան գիրկը: Այդ մղումը ծագում է անձի հոգեկան ընկճվածության փուլում, որպես մելամաղձության, տվայտանքի արտահայտում: Ռեալիստական վեպի հերոսը հանդես է գալիս անհատի զգացողությունների, ինքնագիտակցման գրգիռների արտահայտության ձևով, անհատ, որ օտարված է հասարակությունից: «Նա հասարակական հարաբերությունների մեջ իր գոյությունը գիտակցող անհատն է, և տիպականի մեջ գծագրում է նաև սոցիալականը»[13]:

Շահյանին տանջում է սեփական ապիկարության գիտակցումը և անընդատ անձնաքննությունները կրծում են նրա սիրտը: Գրողն էլ մի կողմից է դատափետում իր հերոսին՝ «Շահյանը տղամարդ չէր և չուներ տղամարդի արժանապատվություն», կամ՝ «Բարոյական մի թեթև հարվածով այդ երկու աղջիկը տեղից շարժել էին անշարժության մեջ փտած երիտասարդին, ցնդել նրա թմրած ուղեղը...»:

Վեպի սկզբնական տարբերակում կարծես թե հեղինակը այնքան էլ չի քարկոծում իր հերոսին, մինչդեռ հետո հենց սկզբի էջերից զգացվում է նրա կծու ակնարկը. «...Կարծես զատկի գառը լինիս», «Շահյանը... ոչխարի աչքերով մի անգամ միայն նայեց նրան»:

Լևոնը մատնված էր մենակության, ինքնադատապարտման և կյանքը նրա համար անբովանդակ ու անիմաստ դատարկություն էր: Խզված էր կապը նրա և աշխարհի միջև, և ակնկալելի էր նրա հետագա որոշումը: Եթե նույնիսկ

---

[11] Ա. Шопенгауер "Мир как воля и представление", Минск, 1998, стр. 440.
[12] Վ. Սաֆարյան, Գրողի և կերպարի անհատականությունը. Ե., 2001, էջ 215:
[13] Ս. Սարինյան , Հայոց գրականության երկու դարը , Ե. , 1988 , էջ 264:

առժամ կանխեին նրա վճիռը, այնուհանդերձ, նա ի վերջո կդիմեր այդ քայլին, որովետև նման բնավորությունները ունակ չեն հաղթահարել սեփական ինքնասիրությունը, երկմտանքը, և որքան ապրեր, այնքան կխորանար իր ոչնչության գիտակցության մեջ: Չհուսահատվելու ու չտառապելու համար անհրաժեշտ էր «ակտիվ գործունեություն ու ստեղծագործական ուժ», որը բացակայում է այս հերոսի մեջ: «Ստեղծագործությունն է կազմում մարդու իմաստը, նրա էության բուն հիմքը: Եվ երբ մարդ հասնում է իր հոգու այդ խորունկ գիտակցության, նա այրվում է ապրել տենչալու կրակով»[14]: Միայն պառկել, երևակայել-սա չի նշանակում ապրել. արդեն իսկ նրա գոյությունը անգոյություն է, և «մեկից դեպի մյուսը մի քայլ է» (Կամյու):

Ելնելով հոգեբանական շարժառիթներից, կյանքի ըմբռնումից, զգացողությունից, կարող ենք ասել, որ Շահյանի կենսահայեցողությունը հոռետեսական է: Նրա էությունը պայմանավորված է կամազրկությամբ, անվճռականությամբ: Նա անկարող է որևէ գործի ձեռնամուխ լինել: Մի անգամ փորձում է զբաղվել, տրվել աշխատանքի՝ թարգմանություն է անում հոռետես փիլիսոփաներից, բայց Սինայանի մի ակնարկը բոլորովին թեաթափ է անում նրան: Ինչ կարելի է սպասել մի մարդուց, որը չունի համարձակություն՝ ընդունել կնոջ հրավերը և գնալ նրա տուն, որը «...այնքան սարսափեցնում էր նրա վախկոտ կամքը», չնայած, որ «ցանկալի էր նրա վավաշոտ երևակայության համար» (306): Եթե նրա մոտ «մի բան» ստացվում էր, ապա միայն երազանքներում՝ երևակայական համարձակությամբ: Երբ մարդու մղումներն ու հակումները սկսում են ներհակվել իրար և անհատը անկարող է իշխել դրանց վրա, սկսվում է ներքին պատերազմը, որից մարդ դառնում է ջղային, հետզհետե խորասուզվելով ինքն իր մեջ՝ հիստերիկայի գիրկն է նետվում: Եվ ցավալին այն է, որ չի կարող ազատվել առաջ եկած մաղձից և եթե հաջողվում է աստված մի արասցե. անմիջապես վեր է խոյանում նրա արժանապատվության հիվանդագին հարցը: Շահյանի օրինակով մենք համոզվում ենք դրանում. Շահյանը տանը բռնակալ էր, իսկ դրսում խեղճացած մի երեխա, որ վախենում էր շփվել, խոսել, նույնիսկ բարևել մարդկանց: Սակայն ազդվելով դրանից, զգալով իր խեղճությունը, իր ամբողջ մաղձը թափում էր տանը ծնողների վրա, նրանց գլխին դառնալով «կատարյալ պատիժ»: «Նա լացացնում էր հորն ու մորը և կարծես, մխիթարվում էր նրանց արտասուքով» : Այդ զգացումը շուտով փոխարինվում էր խոր մելամաղձությամբ: «Այդ այն զարհուրելի մելամաղձությունն էր, որի ժամանակ մարդու հոգին կաշկանդվում է, միտքը թմրում, զգացմունքները բթանում,

---

[14] Ֆրանցյան «Նիցշե և նրա փիլիսոփայությունը» ,Թիֆլիս , Հերմես .1910, էջ 87.

աշխարհը մութ է թվում, կյանքն՝ անտանելի, մահը՝ ցանկալի»(74): Մարվան գիրկը բոլորն են գնալու՝ ոմանք անհոգ կամ մտատանջ, մի մասը տխրելով ու մորմոքելով, մյուսները՝ ժպիտով ու գոհունակությամբ: Եվ որքան շուտ ազատվես կյանք կոչված դժոխքից, այնքան շուտ կգտնես հոգու անդորրությունը. սա է նրա փիլիսոփայությունը:

Իր անլիարժեքության տվայտանքը և միայնության ուրվականը իմաստազերծ են անում նրա գոյությունը, որի համար էլ մահը գերադասում է կյանքից: Օտարվածությունը, ինքնաժխտման տառապանքի զգացումը դրդում են ինքնասպանության, ուր երևում է նրա հոգեկան արձագանքը, բողոքը, միջավայրի դեմ: Այսպիսի բնավորությունների մեջ չափազանց զարգացած է նեղսրտությունը, դրան հետևող հուսահատությունը, որը մեռցնում է ցանկացած զգացմունք: Սիրո զգացումը որպես «աստվածային տուրք» նույնպես խորթ է նրանց: Առաջին հայացքից թվում է Շահյանը սիրում է Եվային, ապա՝ պանի Զդանևիչին, բայց դա լոկ հրապուրանք է, սիրահարվածություն, գուցե և երևակայական սիրո արգասիք, որը շուտով անկարողության պատճառով անհետանում է՝ տեղը զիջելով հիասթափությանը: Նման անձիք չունեն և չեն կարող ունենալ սիրելու ունակություն, որովհետև «սիրելու համար մարդու հոգին բաց պիտի լինի մի ուրիշին ընդգրկելու համար»[15]: Սի՞թե՝ սիրող մարդը հետ կքաշվեր՝ տեղ զիջելով իր ընկերոջը, որը բացահայտորեն սիրահետում էր իր «թվացյալ սիրած էակին»: Եզրակացությունը այն է, որ ինքնասերը լցված է միայն ինքն իր հանդեպ ունեցած սիրով և ավելին պահանջելը անիմաստ է:

Շահյանի և ընդհանրապես նրա նմանների հոռետեսական ապրումները չեն սահմանափակվում սուբյեկտիվ շրջանակներում: Դրանք վարակիչ են և առաջ են բերում համընդհանուր տրամադրություն: Շահյանի կերպարին ծանոթանալիս, ընթերցողը ընկնում է նույն մելամաղձության գիրկը, ինչ ապրում է հերոսը, և թվում է՝ ինքն էլ նույն տիպական անձն է՝ անկարող, թույլ, կամազուրկ և այլ նման հատկություններով օժտված: Դա մասամբ պայմանավորված է նաև հոգեբանական ռեալիզմի առանձնահատկությամբ, գրողի հմտությամբ, պատկերը խորությամբ նկարագրելու ունակությամբ, նրա իրական լիցքեր հաղորդելու կարողությամբ, ինչը հաջողվում է խորատես արվեստագետին: Շահյանի կյանքը դարձել է մի բեռ, և նրա նպատակը ուղղված է մի որոշ կետի, ազատվել գոյության ճնշումից, դարձնել այդ ճնշող գոյությունը անզգալի: Սպանել ժամանակը, ազատվել ծանձրույթից, որովհետև կյանքը լեցուն է ծանձրույթով ու դատարկությամբ: Այն նման է «ժամացույցի

---

[15] Ս. Տերտերյան «Երկեր», Երևան, 1980, էջ 154:

մի ճոճանակի, որ հավիտենապես ճոճում է տաքջանքի և ցանցրության մեջ»[16]: Նրա գոյությունը արդեն «ներկայի մի մշտական մահ է դեպի մեռած անցյալը: Իսկ ֆիզիկական կողմից դիտած- նա մի երկար մահ է»[17]: Հոգեկան այդ ալեբախումները առաջ են գալիս հուսախաբությունից, կասկածամտությունից, անվստահությունից, երջանկության անհնարելիության գիտակցումից: Իսկ ե՞րբ է մարդ երջանիկ: Երբ ինքն է ձգտում ստեղծել այդ երջանկությունը, երբ նրա մեջ վառվում է ապրելու և գործելու տենչը: Մինչդեռ մեր հերոսի կիզակետը մահն է, անշարժ ու հանգիստ վիճակը: Հետաքրքիր է մահվան ձգտող անձանց կերպարանքը, որին անդրադարձել է Նար-Դոսը: Նա հենվում է էքզիստենցիալիզմի ներկայացուցիչների արտահայտած այն մտքի վրա, որ «մարդ մահվան ժամանակ դառնում է խորհրդավոր ու տրագիկ»: Հիշենք Շահյանի կերպարը Մինասյանի նկարագրությամբ, երբ վերջինս այցելում է նրան շնորհավորելու Նոր տարին, իսկ Լևոնը տեղյակ չէ նույնիսկ, որ իր հետև թողնում է ևս մեկ «անիմաստ, միապաղաղ» տարի: Հեղինակը այստեղ ավելի է ընդգծում նրա կտրվածությունը աշխարհից: «Շահյանը նստած էր բազկաթոռի վրա, գլուխը ետ էր ձգել բազկաթոռի թիկունքին և ոտները դրել էր առջևը գտնված մի աթոռի վրա, այնպես որ գլուխն ու ոտների ծայրերը գրեթե հավասար բարձրության վրա էին գտնվում...աչքերը...ուռած, կարմրած և պատած էին կես- կապտավուն, կես- սևագույն շրջանակներով. դեմքը գաջի գույն էր ստացել և խիստ լղարել: Մինասյանին թվում էր, թե իր առաջ տեսնում է ոչ թե Շահյանին, այլ նրա ուրվականը...»(391) :

«Ինքնասպանությունը միտումնավոր կերպով կյանքից զրկել է»[18], որի պատճառը բազմիցս նշած անտարբերությունն է դեպի իր շրջապատը, առհասարակ՝ կյանքը: Նման մարդիկ պատրաստ չեն կրելու կյանքի հարվածները. ճակատագրի կնիքը: Նար-Դոսը, նկարագրելով արտաքին դրդապատճառները, դրանց ազդեցությունը անհատի հոգեկանի վրա, չի անտեսում նրա ներքին աշխարհի կառույցի շերտերը, ներհոգեկան որակները, որոնք նրանց մահվան հիմքն են հանդիսանում: Աննա թույլ է խմում, չկարողանալով դիմադրել կյանքի «անակնկալներին», նաև այն ակնկալիքներին, ինչ խոստանում էր նրան կյանքը այսուհետ: Բուրժուական հասարակության մեջ դաստիարակված այդ հերոսուհուն պակասում է կամքի տոկունությունը, հաստատակամությունը, ինչը կկանխեր նրա մահը: Նյութականի քայքայումով կործանվում է անհատը՝ առանց վարանելու սեփական ձեռքով տնօրինելով իր մահը: Մշտապես շրջապատված լինելով հարուստ ու գեղեցիկ իրերով, սովոր փափկակեցության,

---

[16] Ե. Ֆրանգյան «Պեսիմիզմի փիլիսոփան», Երևան, 1860-1910, էջ 87:
[17] Ե. Ֆրանգյան «Պեսիմիզմի փիլիսոփան», Երևան, 1860-1910, էջ 89:
[18] Ожегов С. И. "Словарь русского языка", Москва, 1988, стр. 568.

շքեղության, դժվար է այդ ամենից հետո կրել չքավորության հարվածները, ոչ թե ապրել, այլ՝ գոյատևել։ Մի՞թե մի գրոշ արժե կյանքը, ուր միայն իշխում է տառապանքը, եթե կա միջոց փրկվելու, հոգու ազատություն գտնելու։ Պարզապես պետք է նախապատրաստվել, և կգտնես անդորրը։ Աննան իր անձնազոհության կատարելու մեղքը բառնում է իր ստացած դաստիարակության վրա, որը նրան օժտել է անվճռականությամբ։ Կարող է նման դաստիարակություն ստացած աղջիկը հանդուրժել այդպիսի կեցությունը, կրել օրեցօր ավելացող տառապանքները, որոնք սաստկացնում են նրա ապրումները, ատելի դարձնում կյանքը. «Ա՜խ որքան ծանր է, որքան ծանր է, սիրելի քույրիկ,- գրում է Աննան իր ընկերուհուն։ Այնքան ժամանակ ոչ մի ծանր վիշտ տեսած չլինելով մեր ընտանիքի մեջ, այժմ այս սոսկալի դժբախտության առաջ զգում եմ, որ հոգիս շատ հեշտությամբ է ընկճվում... Եվ կարե՞լի է միթե անվեհերությամբ դեմ գնալ ճակատագրի մի այսպիսի հարվածի»[19]։ Այսպիսով, «կործանվում են մարդիկ, իսկ մեղավորը հասարակական հարաբերություններն են»[20]։ Ինքն իր մեջ ներփակված բնավորությունը փշրվում ու տատանվում է թեթև վարանումներից։ Պատվիրատու կնոջ հանդիմանական խոսքերը, կարծես ստիպում են Աննային՝ ավելի խորը գիտակցել իր անպիտանիության մասին՝ «...Ինքս ոչի՞ նչ եմ, ոչի՞նչ, ոչի՞նչ...»,- բացականչում է Աննան, և ցավագնորեն զարգացած նույն ինքնասիրությունն է, որ նրանից խլում է այնքան օրերի տառապանքներն ու արտասուքները, երբ ստանում է ընկերուհու ուղարկած գումարը. «Կյանքիս մեջ դեռ այնպես լաց չէի եղել. արտասուքիս յուրաքանչյուր կաթիլը, կարծես թույն էր, որ քաղվում էր ուղղակի սրտիցս...»։ Եվ այդ ամենը Աննան վերագրում է ճակատագրին, որը քայքայել է իր ամբողջ «բարոյական աշխարհը» և ստիպում է «հաստատուն մնալ»։ Ցանկացած տրամադրություն ալեկոծում է նրա կանացի քնքուշ սիրտը, որի ժամանակ «ուզում ես աղոթել ու անիծել, ուզում ես ապրել ու մեռնել»։ Տաղտկության ակունքները պետք է փնտրել անգործության ու մենակության մեջ, որին մատնել է իր անձը, որովհետև բացի ծանձրույթից ինչ կարող էր զգալ ամբողջ օրը լուսամուտի առաջ նստած և «ցրտից անզորացած ճանճերին» սատկացնող անձնավորությունը։ Նորից նույն շահայանական տիպը, ինչպես բնութագրում է Տերտերյանը, որը դարձել է «եղեգն շարժուն ի հողմն»[21]։ Աննայի ինքնասպանությունը չի զարմացնում, որովհետև հեղինակը տրամաբանական շերտերով զարգացնելով հերոսուհու ներքնաշխարհը, այն բացում է ընթերցողի առաջ, իսկ վերջինս էլ

---

[19] Նար-Դոս «Աննա Սարոյան», հ 1. , Երևան, 1990. էջ 439։
[20] Վ.. Սաֆարյան, «Գրողի և կերպարի անհատականությունը», Երևան 2001, էջ 217։
[21] Ա. Տերտերյան, Երկեր. , 1980, էջ 149։

ամեն որպէս ակնկալում է նրա մահը: Նրա հոգին այնքան է լցվել դառնություններով ու տառապանքներով, որ այլևս հաղթահարելը անհնարին է: Աննայի համոզմամբ կա համընդհանուր, անվախճան տիեզերական կեցություն, որի առջև կյանքի ու մահվան սահմանագիծը դառնում է արհեստական մի սյուն, և վերանում է ամենահզորը մարդու մեջ՝ մահվան նկատմամբ ունեցած սարսափը:

Մահվան գաղափարը մարդու մեջ պատահականորեն չի առաջանում: Նար-Դոսի հերոսների օրինակը ևս հաստատում է, որ մահը առկա է անձի ենթագիտակցականում, և դեպքերի բերումով՝ լինի դա միջավայրի, դաստիարակության, ճակատագրի մեղքը, այն անցնում է գիտակցական ոլորտ, որտեղ և կարող է ձեռք բերել իրագործելի բնույթ: Հետզհետե մարդը նախապատրաստվում է իր անկմանը, դրա համար էլ հեշտությամբ կայացնում է իր վճիռը:

Մինչև Շահյանի ինքնասպանությունը, ընթերցողը նկատում է դեպի մահ ձգտող անհատի հոգեվիճակը: Երբ նա վերադառնում է պարահանդեսից, անցնում է կամուրջի վրայով և հրապուրվելով ալիքներով՝ արագ հետ է քաշվում ուղեղում ծագած մտքից խույս տալու համար: «Ոչինչ չկա, ոչ մի հիմնավոր բան, որից կարողանայի ամուր կպչել՝ չանհետանալու համար,- բացականչում է մեկ այլ երկի հերոսուհին»[22]: Հետևաբար, կյանքի ու մահվան բնազդը փոխկապակցված են, և կարևորն այն է, թե ի վերջո որն է գերակշռում:

Ըստ էության դա հավերժ մտատանջության, տվայտանքի, հարատև մտայնությունն է՝ բնորոշ Նար-Դոսի որոշ հերոսներին՝ մահվան հետ հաշտ վերաբերվողներին: Նրանք գիտեն թե ինչ է կյանքը, ինչ՝ մահը, դրանցից որն է իսկականը, ճշմարիտը:

Կյանք-մահ հարաբերությանը անդրադառնալով,Նար-Դոսը հանգում է այն եզրակացության, որ բոլորովին էլ իր հերոսների համար կյանքը իմաստ չունի, իսկ մեռնելը փափագ է, հավերժություն, որովհետև այն կենսաբանական երևույթ է, որի դեմ պայքարել հնարավոր չէ, ընդհակառակը՝ որքան շուտ մեռնել, այնքան՝ լավ: Փաստի հետ գրողը ներքնապես հաշտված է, որը և ուրույն ձևով է ընկալում ու պատկերում:

---

[22] Նար-Դոս, հ. I , «Սպանված աղավնի», Երևան, 1990, էջ 473: